



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 28 » հոկտեմբերի 2024 թ.

N 90-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ  
ԵՎ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N 15-Ն հրամանի N 1 հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետերով և հիմք ընդունելով լիցենզավորող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի N 49 արձանագրությունը, ինչպես նաև հաշվի առնելով, որ խնդրո առարկա անձինք նախկինում չեն ունեցել համապատասխան գործունեության ենթատեսակի ներդիր

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի 25 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 8 լիցենզիայի և թվով 19 ներդիրի, քաղաքաշինական փաստաթղթերի կազմման թվով 7 ներդիրի, քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության թվով 1 ներդիրի տրամադրման վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

10/18/2024

X

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ